Որեւէ երկրի քաղաքական, տնտեսական կարգերը գնահատելիս շատ կարեւոր են ներգաղթի եւ արտագաղթի ցուցանիշերը: Այսինքն՝ եթե շատ մարդ է մտնում երկիր, դա խոսում է քաղաքական եւ տնտեսական գրավչության, ծգողականության մասին: Եւ հակառակը՝ եթե մարդիկ հեռանում են, նշանակում է կյանքի բավարար պայմաններ չկան:

Այս տեսակետից հետաքրքիր կլինի դիտարկել Խորհրդային Հայաստանի պատմությունը: Ասելով Խորհրդային Հայաստան, նկատի ունեմ ոչ միայն աշխարհագրական տարածքը, այլեւ հասարակարգն ու իրականությունը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1920-90 թվականներին, դեպի Հայաստան եղել է երեք ներգաղթ: 1921-36-ին Հայաստանն ընդունել է ավելի քան 40 հազար հայերի: 1946-49-ին՝ 95 հազար: 1962-80-ին, ոչ լրիվ ճշտված տվյալներով՝ եւս 40 հազար: Ուրեմն՝ 70-ամյա պատմության ընթացքում Խորհրդային Հայաստանն ընդունել է շուրջ 175 հազար ներգաղթող: Պետք է խոստովանել, որ մարդկային ներուժի այս հոսքերը բավական տպավորիչ են:

Վիճակագրական տվյալներին ծանոթանալիս կարելի է արձանագրել, որ խորհրդային իրականությունը գրավչություն է ունեցել եւ հազարավոր մարդկանց ստիպել է թողնել բնակության նախկին վայրերն ու ներգաղթել Հայաստան: Բայց չպետք է մոռանալ, որ 70-ամյա պատմության առնվազն 50 տարվա ընթացքում արտագաղթելու հնարավորությունը եղել է բացառված:

Միգրացիա երեւույթի, որը ներառում է ե՛ւ ներգաղթը, ե՛ւ արտագաղթը, դասական ձեւակերպումը լավ կյանքի որոնումն է: Բառացիորեն այսպես. «Մարդկանց, խմբերի տեղաշարժ դեպի նոր տարածքներ, երկրներ աշխատանք եւ կյանքի ավելի լավ պայմաններ գտնելու համար»: Այսինքն՝ միգրացիայի շարժիչն՝ ըստ այս ձեւակերպման, ընտրությունն է՝ համեմատելը եւ տարբերությունն զգալը: Այս իմաստով դեպի Հայաստան երեք ներգաղթներն էլ չեն համապատասխանում դասական ձեւակերպմանը:

Ասվածը փաստելու համար փորձենք առանձնացնել երկրորդ ներգաղթը, որ հայտնի է որպես Մեծ հայրենադարձություն, քանի որ դրանում շատ պարզ երեւում է սեփական կամքով ընտրություն կատարելու եւ քարոզչական պարտադրանքի ենթակա լինելու տարբերությունը:

1945-ի գարնանը, երբ 2-րդ աշխարհամարտը դեռ չէր ավարտվել, բայց ակնհայտ էր, որ ԽՍՀՄ-ը հաղթում է, Հայաստանի ղեկավարությունը դիմում-նամակներով փորձում էր համոզել կենտրոնական իշխանությանն, ավելի ճիշտ՝ Ի.Վ. Ստալինին, կազմակերպել հայերի ներգաղթ:

Մոսկվան՝ ոգեւորված պատերազմի հաղթանակներով, ցանկություն ուներ ծավալվել դեպի Թուրքիա եւ Իրան: Հայաստանին պետք է միացվեին Կարս-Արդահանի գավառները: Եւ որպեսզի դա չհամարվեր ագրեսիա, ԽՍՀՄ դիվանագիտությունն առաջխաղացման այդ ցանկությունը փորձում էր ներկայացնել որպես 1-ին աշխարհամարտի ընթացքում հայության կրած վնասների փոխահատուցման ակտ: Պոտսդամի կոնֆերանսում ԽՍՀՄ արտաքին

գործերի ժողկոմ Մոլոտովը դաշնակից պետությունների ԱԳ նախարարներին համոզում էր, որ աշխարհով մեկ սփռված հայությանն ի մի բերելու համար անհրաժեշտ է տարածքային վերաձեւումներ անել:

ԽՍՀՄ այդ ծրագիրը, բնականաբար, ձախողվեց. դաշնակից հավանություն չտվեցին, իսկ 1945-ին Ճապոնիայի Հիրոսիմա եւ Նագասակի քաղաքներին ուղղված ատոմային հարվածներով հավասարակշռությունը խախտվեց: Միացյալ Նահանգները հավասարների մեջ դարձան առաջինը: Ավելի ուշ՝ 1947-ին Թրումենյան դոկտրինով Թուրքիան կհայտնվի ԱՄՆ հովանու ներքո եւ կավարտվի «հայոց արդարությունը» վերականգնելու գործընթացը:

1945-ի նոյեմբերի 21-ին, երբ Ստալինը ստորագրում էր հայերի ներգաղթն արտոնելու հրամանագիրն, արդեն պարզ էր, որ հողերը չեն միացվելու: Ստալինը ոգեւորված չէր ներգաղթով, որովհետեւ գիտեր, որ երկիրը սոցիալ-տնտեսական լուրջ դժվարություններ ունի եւ զանգվածային հոսք ընդունելու ունակ չէ: Բայց Հայաստանի իշխանությունները պնդում էին՝ հույս ունենալով հընթացս լուծել մի շարք հարցեր, այդ թվում՝ նաեւ Ղարաբաղի խնդիրը:

Հայտնի է, որ այդ ժամանակ բարձր ատյաններում ներկայացվել է ներգաղթողներին տեղավորելու նպատակով Ղարաբաղը Հայաստանին միավորելու հարցը: Ադրբեջանի իշխանությունները՝ կտրուկ չմերժելով, առաջարկել են Ղարաբաղը զիջելու փոխարեն ազատել Հայաստանի ադրբեջանաբնակ գյուղերը, հանել իրենց հայրենակիցներին ու տեղափոխել Ադրբեջան: Ադրբեջանցի պատմաբաններն այսօր դա ներկայացնում են որպես հայերի կողմից իրականացված զանգվածային աքսոր, մինչդեռ տեղափոխությունը կատարվել է միութենական երկու հանրապետությունների ղեկավարների համաձայնությամբ եւ Մոսկվայի հավանությամբ:

Այս իրադարձությունները վկայում են, որ իրականում, մարդը, ընտանիքը, մարդկանց խմբերը մեծ քաղաքականության մեջ չնչին մասնիկներ էին, եւ պատմության հետագա ընթացքը հաստատում է դա:

Ստալինն, առանձնապես ոգեւորված չլինելով՝ բայց ներգաղթը նկատելով որպես ԽՍՀՄ վարկն ամրապնդող գործոն, պատասխանատվությունը թողել էր Հայաստանի ղեկավարների վրա, որոնք արդեն սկսել էին պտտել ներգաղթի թափանիվը: Չորս տարում (1946-49) Հայաստան մտավ 95000 մարդ, բայց Հայրենիք գալու համար աշխարհի 11 երկրում ցուցակագրված էին, տարբեր տվյալներով՝ 300-450 հազար:
Ինչպե՞ս էր կազմակերպվում Հայրենադարձությունը: Սփյուռքահայ համայնքներում կային սովետամետ ուժեր, առաջադիմականներ, որոնք ներգաղթի ջատագովներ էին: Հայաստանից քարոզչություն անելու նպատակով գործուղվում էին էմիսարներ: Հայաստանը ներկայացվում էր որպես երկրային դրախտ՝ անթերի հասարակարգով, առանց սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրների: Եւ մարդկանց ասում էին՝ նստում եք նավ, գալիս եք, ապրում բարգավաճ պայմաններում:

Երբ մարդիկ գալիս ու հասնում էին Բաթումի նավահանգիստ, ամեն ինչ միանգամից փոխվում էր: Մեր արած բոլոր հարցազրույցներում ականատեսները գրեթե միանման բառապաշարով

նկարագրում են Բաթումի նավահանգիստը, ուր տեղի է ունեցել ստացված խոստումների, կառուցված երազանքների, ապրված անուրջների եւ իրականության բախումը:

Ականատեսներից շատերն են պատմում, որ ընտանիքի ավագները հորդորում էին չհուսահատվել՝ ասելով սա դեռ Բաթումն է, Հայաստանում ուրիշ է լինելու, ավելի լավ է լինելու: Այսինքն՝ մարդիկ պատկերացում չունեին, որ Հայաստանը ԽՍՀՄ-ի մի մասնիկն է եւ կարծում էին, թե գնացքով մեկ օրվա ճամփա անցնելով՝ հայտնվելու են այլ իրականության մեջ, մինչդեռ Հայաստանում նրանց սպասում էին մի շարք դժվարություններ եւ, ի հետեւանք դրանց՝ մեծ հիասթափություն:

Առաջինը՝ ներգաղթողների տեղավորման հարցն էր: Ներգաղթի կազմակերպիչները հավաստիացրել էին, որ նորակառույց տները Հայաստանում սպասում են իրենց: Նոր բնակարաններ հատկացվում էին քչերին: Մարդկանց հիմնականում տեղավորում էին գոմերում, ոչ բնակելի տարածքներում, լավագույն դեպքում՝ հանրակացարաններում: Դրանից բացի՝ ներգաղթողների ընտանիքներին բնակեցնում էին տեղացիների տներում: Այսինքն, գալիս, ասում էին՝ դու ունես երեք սենյակ, մի սենյակն ազատում ես, տալիս ես ներգաղթողին: Մարդիկ իրենց տանն ընդունում էին 3-4, երբեմն 7-8 հոգանոց անծանոթ ընտանիքի, ինչն էլ, անշուշտ, նպաստում էր տեղացի-հայրենադարձ հակասությունների սրմանը:

Երկրորդը՝ սննդի հարցն էր, որը մեծ հիասթափություն առաջացրեց: Սեւ, թաց հացի թեման կարմիր թելի պես անցնում է բոլոր ականատեսների պատմություններով:

Երրորդն աշխատանքի խնդիրն էր: Համեմատած մյուս երկուսի հետ, թվում է, սա լուծելի էր. բոլորն ինչ-որ տեղ տեղավորվում էին աշխատելու՝ գործարաններում, սովխոզներում, կոլխոզներում: Այստեղ խնդիրն այլ էր. մարդն ի՞նչ մասնագիտություն ունի, ո՞ւր են ուղարկում նրան աշխատելու՝ արհեստավորին՝ գյուղ, գյուղացուն՝ քաղաք, բայց դա էլ մի կերպ կարելի էր հաղթահարել: Ամենամեծ խնդիրն ազատ աշխատելու հնարավորության բացակայությունն էր, թեեւ քարոզչության ընթացքում ասվել էր, որ Հայաստանում հնարավոր է գործով (բիզնեսով) զբաղվել: Գալով Հայրենիք՝ մարդիկ տեսան, որ ազատ ձեռներեցությունը ոչ միայն արգելված է, այլեւ՝ պատժելի:

Ներգաղթողներից շատերը լրջորեն նախապատրաստվել էին ազատ ձեռներեցությամբ զբաղվելուն՝ իրենց հետ բերելով սարքավորումներ, գործիքներ, ամբողջ արտադրամասեր, բայց դրանք անմիջապես պետականացնում էին եւ մարդուն ասում էին՝ խնդրեմ, կարող ես գալ, քո բերած արտադրամասում աշխատել, բացառիկ դեպքերում՝ նշանակում էին տնօրեն կամ պետ:

Այս ամենը բնականաբար առաջացնում էր դժգոհություն եւ հենց 1946-ից սկսվեցին փախուստները: Շատ քչերին էր, իհարկե, հաջողվում հատել սահմանը, գնալ բնակության նախկին վայրերը: Հիմնականում փախչում էին Թուրքիայով կամ Իրանով: Ում հաջողվում էր անցնել ու հասնել բնակության նախկին վայրերը, պարտադիր հետները տանում էին սեւ հացի կտոր, որպեսզի դրանով փորձեն կանխել հարազատների, ծանոթների, ընկերների

գալուստը: Բայց քարոզչությունն այնքան հզոր էր, որ սեւ հացի կտորն ազդեցություն գրեթե չէր գործում: Փախչողներին սփյուռքի համայնքներում հաճախ հալածում էին, համարում Թուրքիայի լրտես կամ գործակալ:

Փախուստի փորձ անողների մեծ մասը բռնվում էր: Այդ տարիներին՝ 1946-48 թվականներին, նրանց պատժում էին, բայց բավական մեղմ՝ 1-2 տարվա ազատազրկում կամ պայմանական: Բայց տեսնելով, որ ԽՍՀՄ սահմաններից դուրս գալու մղումն ահագնանում է, իշխանությունները փոխեցին եւ մեղադրանքը (Հայրենիքի դավաճանություն), եւ պատժաչափը (10-15 տարի բանտարկություն):

Հայաստանի ազգային արխիվում պահվող «հույժ գաղտնի» փաստաթղթերից տեղեկանում ենք, որ հայրենադարձության առաջին իսկ տարում՝1946-ի հուլիս-դեկտեմբեր ամիսներին, կանխվել է փախուստի 7 դեպք՝19 մարդու մասնակցությամբ: 1947-ին եղել է 91 դեպք / 270 մարդ: 1948-ին, (մինչև օգոստոս ամիսը՝ 71 դեպք / 133 մարդ: Այսինքն մոտ երկու տարում (1946 հուլիս-1948 օգոստոս) ավելի քան 400 հայրենադարձ փախուստի (արտագաղթի) փորձ է ձեռնարկել:

Պաշտոնական այլ փաստաթղթերում խոսվում է հայրենադարձների շրջանում տարված բացատրական աշխատանքի մասին, որի շնորհիվ 1947-ին հաջողվել է փախուստի մտադրությունից հետ պահել 287, իսկ 1948-ի հունվար-օգոստոս ամիսներին՝42 մարդու: Եւ, չնայած սահմանապահների աչալրջությանն ու զգոնությանը՝ 1946-47-ին պետական սահմանն անցնել հաջողվել է 20 մարդու (5 դեպք), իսկ 1948-ի յոթ ամիսներին՝ 11 (1 դեպք):

Որ փախուստները կամ արտագաղթի միտումները լուրջ գլխացավանք էին Խորհրդային Հայաստանի կառավարության համար, վկայում են հետեւյալ քայլերը: Ընդառաջելով սահմանապահ զորքերի հայկական օկրուգի առաջարկին՝ ՀԽՍՀ նախարարների խորհուրդը որոշումներ է կայացրել սահմանամերձ բնակավայրերից արտագաղթի միտումներ ունեցող հայրենադարձների ընտանիքներին հանրապետության խորքային շրջաններ տեղափոխելու մասին: Այսինքն՝ կազմակերպվել է հարկադիր տեղահանություն կամ ներքին աքսոր: Միաժամանակ որոշում է ընդունվել սահմանամերձ շրջաններում բնակեցված (հավանաբար՝ նման միտում չունեցող) հայրենադարձների նյութական-կենցաղային պայմանների բարելավման միջոցառումների մասին:

Այս պայմաններում իշխանություններն իրականացնում էին քաղաքական հետապնդումներ՝ գործի դնելով տեղացիներին վաղուց ծանոթ պատժիչ մեքենան: Հայրենադարձները անվտանգության մարմինների ուշադրության կենտրոնում հայտնվում էին հիմնականում ազատամտության, բացխոսության, բողոք արտահայտելու պատճառներով, բայց «գործով» մեղադրվում էին դաշնակցական լինելու, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան գաղտնի ծառայությունների հետ համագործակցելու համար:

1946-52 թվականներին այսօրինակ մեղադրանքներով դատապարտվել են շուրջ 800 ներգաղթողներ: Եթե սրան գումարենք 1949-ի հունիսի 13-14-ին զանգվածային աքսորում ներգրավված շուրջ 1500 հայրենադարձներին, կստանանք մի թիվ, որն 95000-ի հետ

համեմատած մեծ չէ: Մեծ չէ թվային արժեքով, սակայն նշանակալի է հայրենադարձ զանգվածի վրա ունեցած բացասական ազդեցությամբ:

Քանի որ հայրենադարձներն ապրում էին համատեղ, երբեմն փակ համայնքներով, մեկի կենսագրությունը, տառապանքը, դժբախտությունն անմիջապես տարածվում էր բոլորի վրա: Բոլորը դա ընկալում էին որպես սեփական դժբախտություն, որպես անձամբ իրենց հետ պատահած դեպք: Եւ, ի վերջո, ստացվեց այնպես, որ Ստալինի մահվանից հետո, երբ Խրուշչովը դատապարտեց անձի պաշտանմունքը եւ ԽՍՀՄ-ում սկսվեց հարաբերական ազատության շրջանը, հայրենադարձների համար նշմարվեց հեռանալու հույսը:

Եւ այսպես՝ հայրենադարձությունը, որն ինքնին դրական երեւույթ է, խորհրդային գաղափարախոսության, մտածելակերպի եւ վարչական վարքի պատճառով շատերի համար դարձավ դժբախտություն եւ Հայրենիքը լքելու պատճառ: